

գործունեությունը: Հեղինակը կարևորել է մասնավորապես վերլուծության մեթոդական կողմերը՝ փորձելով ցուցանիշների նորովի խմբավորման և ներկայացման ճանապարհով առավել ճշգրիտ և օգտակար տեղեկություն տրամադրել կառավարման օղակներին գործարարության ֆինանսական պատկերի վերաբերյալ:

Նշված հիմնախնդիրների լուծմանն ուղղված հետազոտությունը, մեր կարծիքով, կարևոր է և ներկայումս անհրաժեշտ, ինչը հիմնավորում է Տիգրան Ռազմիկի Մանուկյանի ատենախոսության հրատապությունը և հետազոտության թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակը հեղինակի ներկայացմամբ՝ ֆինանսական վիճակի վերլուծության միջազգային և հայրենական փորձի բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա ՀՀ ոգելից խմիչքների ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի վերլուծության և ախտորոշման տեսական եւ մեթոդաբանական հարցերի կատարելագործման ուղիների մշակումն ու դրանց ներդրմանն ուղղությամբ գործնական առաջարկների կատարումն է: Նպատակին հասնելու համար հեղինակն առաջադրել և փորձել է լուծել հետևյալ **խնդիրները՝**

- նորմատիվ իրավական ակտերում, հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատություններում ֆինանսական վիճակի վերլուծության վերաբերյալ առկա մոտեցումների, տեսակետների, հայացքների և «ֆինանսական վիճակի վերլուծություն» կատեգորիայի ըմբռնման սկզբունքների բազմակողմանի ուսումնասիրություն և քննադատական գնահատական,
- ֆինանսական վիճակի փոփոխության պատճառների, այդ փոփոխության վրա ազդող գործոնների բազմակողմանի ուսումնասիրություն և այդ պատճառների համակարգված ներկայացում ու մեկնաբանություն,
- ֆինանսական վիճակի վերլուծության հայեցակարգային ապարատի ուսումնասիրություն և հստակեցում, ֆինանսական վիճակի վերլուծության գործող մեթոդաբանությունների առավելությունների ու թերությունների բացահայտում և ֆինանսական վերլուծության իրականացման կառուցվածքային-տրամաբանական ալգորիթմի մշակում, որը հիմնվելով ֆինանսական վերլուծության միջազգային պրակտիկայում գործող ավանդական ալգորիթմի հիմնական սկզբունքների վրա, միաժամանակ հաշվի կառնի ժամանակակից

հայաստանյան տնտեսության առանձնահատկությունները,

- ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բնութագրող ընդհանրացնող և մասնակի ցուցանիշների համակարգի մշակում և հիմնավորում,
- միջազգային պրակտիկայում ընդունված նորմատիվների համակարգի վերլուծություն և տնտեսվարման արդի պայմաններում ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունների համար ֆինանսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների արժեքների ընդունելի մակարդակի հաշվարկման մեթոդաբանության մշակում,
- ընթացիկ իրացվելիության գործակցի, շրջանառելիության ցուցանիշների և հաշվեկշռի իրացվելիության մակարդակի գնահատման մեթոդաբանության կատարելագործում,
- ցուցանիշների ձևավորած համակարգի և դրանց արժեքների ընդունելի մակարդակների հաշվարկների հիման վրա ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բնութագրող համապարփակ ինտեգրալ ցուցանիշի կառուցում, որը կազմակերպությունների ֆինանսական վիճակը կգնահատի տարբեր կողմերից և կտա գործոնային վերլուծություն իրականացնելու հնարավորություն:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է 161 էջ ծավալով /առանց հավելվածի/, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական արդյունքներն ու նորոյթը, ինչպես նաև տեսական և գիտագործնական նշանակությունն ու փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ «**Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության տեսական-մեթոդաբանական հիմքերը**» գլխում՝ ուսումնասիրելով ֆինանսական վիճակ կատեգորիայի և դրա առանձին բաղադրիչների վերլուծության միջազգային և հայրենական փորձն ու ընդհանրացնելով հետազոտողների տարբեր

տեսակետները, ատենախոսը տվել է արտադրական ձեռնարկության ֆինանսական վիճակի և ֆինանսական կայունության հեղինակային սահմանումները:

Կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծությանը առնչվող մասնագիտական գրականության և դրանցում առաջադրված մեթոդական մոտեցումների հետազոտության արդյունքում ատենախոսը նշել է այն խնդիրները, որոնք դժվարացնում են ֆինանսական վիճակի վերլուծությունը կոնկրետ ՀՀ խմիչքների արտադրության ոլորտում: Արդյունքում փորձում է հիմնավորել և որպես գիտական նորոյթի առաջին կետ ներկայացնել ֆինանսական վերլուծության իրականացման հեղինակային մոտեցում, ըստ որի հիմնվելով ֆինանսական վերլուծության միջազգային պրակտիկայում գործող սկզբունքների վրա, պետք է հաշվի առնել նաև հայաստանյան տնտեսության առանձնահատկությունները:

Ամփոփ ձևով ներկայացվել են նաև արտադրական կազմակերպությունների ֆինանսական դրության վատթարացման պատճառների համակարգման հիմնական մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների համակարգի և դրանց նվազագույն բավարար արժեքների սահմանման մեթոդաբանության մշակումը» գլխում գործակցային վերլուծության հիման վրա ատենախոսն առանձնացրել է ցուցանիշների այն համախումբը, որը իր հիմնավորմամբ, առավել ամբողջական կարող է ներկայացնում ոգելից խմիչքների ոլորտում գործող կազմակերպությունների ֆինանսական վիճակը: Միաժամանակ ատենախոսը հիմնավորել է ՀՀ տնտեսության և մասնավորապես ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի համար առավել էական ֆինանսական ցուցանիշները, այդ թվում՝ զուտ ընթացիկ ակտիվներ, ընթացիկ իրացվելիության գործակից, ֆինանսական կայունության ցուցանիշներ և մշակել է այդ ցուցանիշների հաշվարկման մոտեցումներ:

Ատենախոսության այս գլխում ստացված արդյունքները հիմք են հանդիսացել եզրափակիչ գլխում ֆինանսական վիճակի ինտեգրալ ցուցանիշի կառուցման համար:

Ատենախոսության երրորդ՝ «Կազմակերպությունների ֆինանսական վիճակի գնահատման կատարելագործման ուղիները» գլխի առաջին ենթագլխում ատենախոսն առաջարկել է կազմակերպությունների վճարունակության գնահատման այլընտրանքային մոտեցում, որի հիմքում դրվել է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության համադրելիության սկզբունքը: Առաջարկված մոտեցմամբ

վճարունակության գործակցի հաշվարկը հեղինակի կողմից ներկայացվել է որպես գիտական նորույթի երկրորդ կետ՝ ուղղված կազմակերպությունների վճարունակության գնահատման կատարելագործմանը:

Միաժամանակ առաջարկվել է այսպես կոչված մատրիցային հաշվեկշռի կառուցման մոտեցում, մասնավորապես ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ծածկման հաջորդականություն: Դա ներկայացվել է որպես գիտական նորույթի երրորդ կետ՝ մատրիցային հաշվեկշիռների տվյալների հիման վրա հաշվարկվել է եռաբաղադրիչ ցուցանիշ և առանձնացվել է ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ապահովվածության չորս աստիճան:

Գլուխն ամփոփվում է որպես նորույթի չորրորդ կետ ներկայացվող ֆինանսական վիճակի և դրա առանձին ուղղությունների ամփոփ ինտեգրալ ցուցանիշների կառուցման մեթոդաբանության ներկայացմամբ: Առաջարկված մոտեցմամբ հաշվարկվող ինտեգրալ ցուցանիշը հաշվի է առնում ինչպես հետազոտվող ամբողջ ոլորտի, այնպես էլ առանձին կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները և գործոնային վերլուծություն իրականացնելու հնարավորություն է ստեղծում:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության վերաբերյալ հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Ուսումնասիրման օբյեկտը ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունն ու ֆինանսական վիճակն է, իսկ **ուսումնասիրման առարկան**՝ ֆինանսական վիճակի վերլուծության և կանխատեսման արդյունավետ համակարգի ձևավորման հետ կապված տեսական, մեթոդաբանական և գործնական խնդիրների ամբողջությունն է:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել ֆինանսական վիճակի վերլուծության և կանխատեսման խնդիրների վերաբերյալ հայ և օտարերկյա՝ հիմնականում ռուսական, հեղինակների գիտական հետազոտություններն ու մեթոդաբանական բնույթի աշխատանքները, տնտեսավարող սուբյեկտների

գործունեության կարգավորման վերաբերյալ օրենսդրական ու նորմատիվ իրավական ակտերը, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութերը, ուսումնասիրված կազմակերպությունների ֆինանսական և կառավարչական հաշվետվությունները, հետազոտության թեմային վերաբերող գիտական հրապարակումները, միջազգային գիտաժողովների հրատարակած նյութերը, էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսները, ինչպես նաև հեղինակի հետազոտության արդյունքները:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ առաջարկված մոտեցումները կարող են նաև գործնական կիրառություն գտնել կազմակերպությունների ֆինանսական վիճակը գնահատելիս:

Ատենախոսությունում կիրառվել են խմբավորման, համեմատության, մատրիցային, գրաֆիկական, տնտեսամաթեմատիկական մոդելավորման, գործակցային, գործոնային, տրենդային և այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա հեղինակը ստացել է տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ, որոնց գիտական նորույթի կետերը հեղինակի կողմից ձևակերպվել են հետևյալ կերպ.

- առաջարկվել է ֆինանսական վիճակի վերլուծության բարելավված կառուցվածքային սխեմա, որում հաշվի են առնված ազգային տնտեսության զարգացման մակարդակը, առանձնահատկությունները, հայկական ընկերություններում ֆինանսական վերլուծության ավանդական ալգորիթմի կիրառման առումով առկա խնդիրները, և որը հիմնված է կազմակերպությունների ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների նվազագույն բավարար ու նախընտրելի արժեքների գնահատումների վրա.
- առաջարկվել է կազմակերպությունների վճարունակության գնահատման այլընտրանքային մեթոդաբանություն, հիմքում դնելով ընթացիկ ակտիվները դրամական միջոցների վերածվելու ժամանակաշրջանի և ընթացիկ պարտավորությունների մարման ժամանակահատվածի համադրելիությունը,

- մշակվել է մատրիցային հաշվեկշռի տարբերակի կառուցման բարելավված մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս գնահատելու կազմակերպության ֆինանսավորման համապատասխան աղբյուրներով ակտիվների ապահովվածության մակարդակը քառաստիճան մոտեցմամբ,

- մշակվել են ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի և դրա առանձին ուղղությունների համապարփակ ցուցանիշներ, որոնք կազմակերպությունների ֆինանսական վիճակը գնահատում են բազմագործոն մոտեցումներով և տալիս են գործոնային վերլուծություն իրականացնելու հնարավորություն:

Գիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը գերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Գիտական նորույթի առաջին կետում ատենախոսը նշում է, որ վերլուծության առաջարկված նոր սխեմայում հաշվի են առնված ազգային տնտեսության առանձնահատկությունները, սակայն ֆինանսական վիճակի առանձին ուղղությունների վերլուծության և գնահատման, ցուցանիշների հաշվարկման ժամանակ բոլորովին հաշվի առնված չէ երկրի մակրոտնտեսական միջավայրը, համապատասխան ցուցանիշներով, այդ թվում՝ ֆինանսական վիճակի վրա էականորեն ազդող գնաճի, արտարժույթի փոխարժեքի, ֆինանսական շուկաների տոկոսադրույքների, արտահանման/ներմուծման ցուցանիշների ազդեցությունը: Մեր կարծիքով, այս հանգամանքը լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի, առավել ևս, որ հենց ՀՀՄՍ և ՖՀՄՍ ստանդարտները ակտիվների և պարտավորությունների գնահատման մի շարք կարգավորումներ են սահմանում՝ կապելով առկա և ակնկալիք տնտեսական իրավիճակի հետ:

2. Նորույթի նույն կետի կիրառման հետ կապված ատենախոսի կողմից առաջարկվել է ֆինանսական վերլուծության արդյունքների հիման վրա մշակել եզրակացությունների տիպային ձևաչափ, սակայն այդ ձևաչափի կառուցման մոտեցումներ ու ցուցումներ շարադրանքում չկան:

3. Գիտական նորույթի երրորդ կետում ներկայացվում են մշակված մատրիցային հաշվեկշռի բարելավված տարբերակի մոտեցումներ, որը հեղինակի պնդմամբ հնարավորություն է տալիս ավելի լավ գնահատելու ֆինանսավորման աղբյուրներով կազմակերպության ապահովվածությունը: Միաժամանակ, պարզ է, որ մատրիցային հաշվեկշիռը հասանելի չէ արտաքին օգտագործողներին: Այդ առումով, մեր կարծիքով, առաջարկն առավել կշահեր, եթե համեմատական վերլուծություն կատարվեր հրապարակվող հաշվետվություններով և մատրիցային հաշվեկշռով ստացված գնահատումների միջև և մշակվեր ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում լրացուցիչ բացահայտումների համակարգ, որը ֆինանսական իրական վիճակի մասին տեղեկությունները հասանելի դարձներ նաև արտաքին օգտագործողների համար:

4. Նույնը կարելի է ասել գիտական նորույթի երկրորդ կետի հետ կապված, որտեղ ներկայացվում է, որ առաջարկված վճարունակության այլընտրանքային մոտեցման հիմքում դրվել է ընթացիկ ակտիվները դրամական միջոցների վերածվելու և ընթացիկ պարտավորությունների մարման ժամանակահատվածի համադրելիությունը: Հեղինակի առաջ քաշված մոտեցումը կշահեր, եթե առավել մանրակրկիտ հիմնավորվեր, թե ինչ առավելություններ են առաջ գալիս բացահայտումների հետ կապված:

5. Գիտական նորույթի չորրորդ կետում նշվում է, որ մշակվել է ֆինանսական վիճակի և դրա առանձին ուղղությունների համապարփակ, կամ ինչպես շարադրանքում է նշվում՝ ինտեգրալ ցուցանիշ, սակայն այդ ցուցանիշը հաշվարկելիս կիառվել են դրա բաղադրիչների կշիռներ: Ցուցանիշի գիտական արժեքը առավել հստակ կլիներ, եթե մանրակրկիտ ներկայացված լինեին կշիռների որոշման մեթոդական հիմքերը:

6. Ատենախոսն իրացվելիության կառավարման հիմնախնդիրներն հետազոտելու արդյունքում առաջարկել է ոչ ընթացիկ ակտիվներում թույլատրելի /թիրախային/ ներդրումների մեծության գնահատման մոտեցում: Միաժամանակ հետազոտության տիրույթից դուրս են մնացել արդյունավետության, այդ թվում՝ կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատման մոտեցումները: Մեր կարծիքով զուտ ներկա արժեքի-NPV, ներդրումների շահութաբերության ինդեքսի-PI, ներդրումների շահութաբերության ներքին նորմայի-IRR, ներդրումների փոխհատուցման ժամկետայ-PP և նման այլ ցուցանիշների գնահատումը առավել կարժևորեր ատենախոսության արդյունքները:

7. Խմբագրական և ձևավորման բնույթի թերություններ՝

7.1 Ֆինանսական վիճակի գնահատման մի շարք ցուցանիշները ներկայացնելիս ատենախոսի կողմից օգտագործվում են տերմիններ կամ անվանումներ, որոնք, մեր կարծիքով, ցուցանիշների բնույթին մասնակիորեն են համապատասխանում: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է 78-79 էջերում առաջարկված «նվազագույն անհրաժեշտ սեփական կապիտալ», «առավելագույն թույլատրելի փոխառու կապիտալ» ցուցանիշներում «անհրաժեշտ» և «թույլատրելի» տերմիններին: Նույնը կարել է ասել 17-րդ էջում բերված ֆինանսական կայունության սահմանմանը: Շարադրանքում հանդիպում են հասկացություններ, որոնք ՀՀՄՍ-երով սահմանված չեն, կամ այլ կերպ են սահմանված /«ֆինանսական ռեսուրսներ», «Փոխառու կապիտալ», «Զուտ ընթացիկ ակտիվ».../, մինչդեռ դրանց բովանդակությունը և ատենախոսության ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ֆինանսական վիճակի վերլուծության համար հիմք ու տեղեկատվության աղբյուր հանդիսացող ֆինանսական հաշվետվություններում դրանց ճանաչման և չափման մոտեցումները լավ կլինեին համապատասխանեցնել ՀՀՄՍ-երի պահանջներին:

7.2 Մեծաքանակ հավելվածները նախ ծանրաբեռնում են ատենախոսություն: Նաև բուն շարադրանքում առաջ քաշված հիմնախնդիրները, նույնիսկ՝ նորությունները հիմնավորում են հավելվածներում բերված թվային ցուցանիշներով ու հաշվարկներով: Բացի դրանից, ատենախոսությունում կազմակերպությունների ֆինանսական վիճակի գնահատումն ու վերլուծությունը ավարտվում է 2019թ. ցուցանիշներով, սակայն, 2020թ.-ին տեղի ունեցած իրադարձությունները /COVID-19 համավարակ, 44-օրյա պատերազմ/ չափազանց էական ազդեցություն են ունեցել տնտեսության և տնտեսվարողների վրա, և եզրահանգումներն առավել արդիական կլինեին 2020թ. հաշվետվական և վիճակագրական տվյալների վերլուծության դեպքում:

7.3 Ատենախոսությունը, ընդհանուր առմամբ աչքի է ընկնում իր մեթոդական արժանիքներով, բազմաթիվ կազմակերպությունների ցուցանիշների ներկայացմամբ, հարուստ տեղեկատվական բազայով /ներկայացված են հավելվածներում/ և այդ ցուցանիշների օգնությամբ կատարված հաշվարկներով, վերլուծություններով և գնահատումներով, սակայն դրա արդյունքային ամփոփիչ եզրակացությունները տեսական, նկարագրողական բնույթ են կրում: Այն առավել կշահեր, եթե ամբողջ ծավալով ներկայացված լինեին հեղինակային մոտեցումները, ինչպես նաև կատարված առեկի ծավալի վերլուծական աշխատանքի արդյունքներն ու արժեքային գնահատականները:

Վերը նշված դիտողություններով, ինչպես նաև ատենախոսության դրական արժանիքներով և գիտական մակարդակով հանդերձ՝ **Տիգրան Ռազմիկի Մանուկյանի «Ֆինանսական վիճակի վերլուծության և գնահատման կատարելագործման ուղիները (ՀՀ խմիչքների արտադրության նյութերով)» թեմայով ատենախոսությունը** կարելի է որակել, որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ ոգելից խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության կատարելագործմանն ուղղված տեսական և գործնական կարևոր խնդիրներ: Վերլուծության ու հետազոտության արդյունքում առաջարկված են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանում, իսկ հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած թվով 8 (ութ) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատակարման պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուներում: Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Տիգրան Ռազմիկի Մանուկյանի «Ֆինանսական վիճակի վերլուծության և գնահատման կատարելագործման ուղիները (ՀՀ խմիչքների արտադրության նյութերով)» թեմայով ատենախոսությունը** համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ա. Ա. Հակոբյան
08 հոկտեմբերի 2021թ.

Ա. Ա. Հակոբյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ

Ն. Կ. Հովհաննիսյան
08 հոկտեմբերի 2021թ.